

ՄԷՐ ՄԻՈՒՄԻ ԱՅԸ

ՀԱՅԿԱՅԻՆ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 30 ՓԱՐՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐԱՅԻՆ ԴԵՄ

ՍՊԱՌՆԱԼԻՔ ՄԸ

Ռուսը Ասիոյ մէջ յայտնուած թիւները ձեռք բերած և Պուրկորիոյ ճակատամարտի դաշտին վրայ ալ իրաց վիճակը քիչ մը բարեփոխած ըլլալով, Ս. Ռէ. թէրապուրիկի և Մոսկուայի ռուսական թերթերը սկսան ձայններն իրարմանել և հաշտութեան ու միջամտութեան մասին պարտաւոր զրոյցներուն վրայ արհամարհանօք խօսիլ, այս պահուստ հաշտութեան ունէ առաջարկութիւն մը անընդունելի նկատելով:

Նախ քան զամենեւին, Նուսթի-թան թերթը այս պահուստ հաշտութեան վրայ խօսիլ իսկ Ռուսիոյ պատուոյն արատ մը կը համարի:

Առ այդմ, կըսէ վերոյիշեալ թերթը, արեւելեան խնդիրը Ռուսիոյ համար սա երկօայրի խօսքն է. կամ թշնամին բոլորովին ջնջել, կամ կէս ճանքան կանկ առել, առաջադրեալ գործին մէջ մասը ապագայ տերութեան ձգել, թուրքիոյ հետ եղած արեւնահեղ և փոստակար պատերազմը ժառանգ թողլով իրենց: Մեր զօրութեանը ներածին չափ մեք մեր գործը յաջող վախճանով յառաջ պիտի տանինք: Սեւ ծովու մէջ մեր տիրապետութիւնը և հարաւարեակ սլավաց վրայ ալ քաղաքական ազդեցութիւնն իսկ պիտի հաստատենք:

Կըսուի թէ եթէ Ռուսիա ռուսական ազգային քաղաքականութիւն մը հաստատապէս ընդունի և ի գործ դնէ՝ եւրոպական կամ այն է Անգլիոյ ու Աւստրիոյ հետ պատերազմի բռնուելու վտանգին մէջ պիտի գնէ ինքզինքը, և կաւելցնեն

թէ այս նկատողութեանց պատճառաւ պէտք է որ Արեւելքի վրայ իր ունեցած նպատակները եւրոպական շահուցը զոհ տայ: Եւրոպայ կրնայ այսպիսի բան մը պահանջել Ռուսիայէն, երբ զայն տկար, ուժասպառու երկմիտ տեսնէ: Բայց զօրաւոր, կռուելու պատրաստ եւ իր քնոյ մէջ եղած զօրութիւնները արթնցնելու կարող Ռուսիոյ մ'առջեւ եւրոպա քիչ մը վիշտութիւն ընելու է: Գրեմի պատերազմին ժամանակը իսկ պառ անցաւ գնաց: Պէտք է պատերազմէն 30 տարիի չափ առաջուան ժամանակի մը դիմել՝ եւրոպական տէրութեանց բռնած խաբեքայ կացութեանը համոձայն բան մը գտնալու համար: Եւրոպական հաւասարակշռութիւն ըսուածը ցնորք մնէ:

Կազմ թ' տ'Ալբանիէի տիւր Նուսթի սպամ: 7 թուականաւ Ս. Ռէ. թէրապուրիկէն առնելով հրատարակած մէկ նամակը՝ բռն սլավական ձկտումներուն դէմ ձայն բարձրացնելով կըսէ թէ, Ռուսիա իր առաջադրած նպատակը միայն ի գործ պիտի դնէ, որ է Պուրկորիոյ, Պոսնայի և Հէրզեգովինի ինքնօրինութիւն տալ, քրիստոնեայիները օսման ցոյց լուծէն ազատել առանց երբեք այդ լուծին տեղ բանտարկելով լուծը անցնելու: Երբ Ռուսիա զինու զօրութեամբ ձեռք ձգէ ինչ որ թուրքիա՝ եւրոպիոյ խորհուրդներուն չանսարով՝ մերժած էր, այն ատեն պիտի տպագրուանէ թէ ինքը կրնայ եւրոպական մեծ տէրութեանց ընդհանուր կարծիքը գնահատել:

Ռուսիա մեքէն անգամ անցուցած չէ Աւստրիոյ արքունեաց մէջ դժուարութիւններ յարուցանել: Գալով Ռուսիոյ ներ-

քին կացութեան՝ կրնայ իրեն ստորդ նկատուիլ թէ՛ պատերազմէն առաջապէս ետքը՝ վարչութեան գործոց, օրէնսդրութեան և տրոց բաշխման մէջ բարենորոգումներ մտցնելով ազգային յառաջդիմութեան նոր չըջան մը պիտի սկսի:

Ռուսական Կօլոս թերթին մէջ ալ հետեւեալը կ'կարդամք: Երեք կայսերաց դաշնակցութիւնը՝ ոչ թէ երկու կայսերաց դաշնակցութեան իրարմանութեան յանգած է, այն է Գերմանիա-Ռուսիա և Գերմանիա-Աւստրիա:

Ինչեօմ կայսրը երկու դաշնակցութեանց մէջ ալ մաս ունի, անշուշտ սա յուսով թէ «երկու աթոռի վրայ նստիլ ուզողը, գետինը կ'մնայ» առածը՝ «մին պիտի նստի և միւս շք գետինը պիտի մնան» պիտի փոխուի այս անգամ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Պատրիարքարանի դիւանատան կողմէն հետեւեալ գրութիւնը շրջուած է մեզ ի հրատարակութիւն:

... Լ. Գ. Ե. Ի.

Պատուական լրագրողը վերջին շաբաթ առուր (Յնոյեմբեր) թերթին մէջ խմբագրական դիտողութիւն մը կարդացի, յորում ցուցնել ուզած էք՝ որպէս թէ Պատր. Փոխ. Գեր. Տ. Հօր բողոքագրին առթիւ յանուն Ազգ. Ժողովոյ հրատարակուած պաշտ. յայտարարութեան գործին մէջ այս կամ այն երեսփոխանին կողմէ ուղղակի միջամտութիւն կամ գործակցութիւն մը տեղի ունեցած ըլլայ:

Ներեցէք ինձ յայտնել թէ՛ այս մասին առած տեղեկութիւնները շատ սխալ է, վասն

զի յիշեալ յայտարարութիւնն ուղղակի Ազգ. Ժողովոյ դիւանին կողմէ մեզ եղած ազգարարութեան վրայ պատրաստուած և հրատարակուած է:

Մնամ Զերդ
Դիւանագր. Թաւմ
8 նոյմ. 1877
Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլիս

Մեր բողոքէն է, ինչէն է որ, կամ մենք խօսք չենք կըրնար հասկցնել և կամ խօսք չը հասկցող մը կեղծ միշտ դէմքերս:

Անհարկեալ մեր նոյն դիտողութեան մէջ քսած էինք թէ «յանուն վարչութեան» լրագրաց մէջ հրատարակութեան տրուած այն պաշտօնական գրութեան նախապատճէնը՝ ոչ Պատրիարքին և ոչ ունէ պաշտօնական մարմնոյ մը ցոյց տըրուած, Դիւանատանէն խմբագրութեան ուղղակի և առանց բոտորագրութեան՝ լրագրաց շրջուած էր:

Հետեւաբար առանց Պատրիարքին կամ վարչութեան ցոյց տրուելու՝ պաշտօնական գրութիւն մը հրատարակութեան տալը անհրաժեշտ զեւթում մը համարած էինք:

Ինչ կըսէ դիւանագետը, մեր այս դիտել տուած կետը հերքելու համար:

— Ոչինչ, այլ կառարկէ թէ «յիշեալ յայտարարութիւնը ուղղակի Ազգ. Ժողովոյ դիւանին կողմէն իրեն եղած ազգարարութեան վրայ պատրաստուել և հրատարակուել է»:

Դիւանին բրած լրագրաց Եւս. ինչ քուր ըլլալը չեմք կըրնար բերել, բայց առկէ սա չափ կ'հասկնամք թէ՛ ընդհ. Ժողովոյ դիւանը յայտարարէ Դիւանատան այդպիսի գրութիւն մը պատրաստուելու:

Ռոյց դիւանին այդ յանձնարութեանը մէջ կամ արդեօք այնպիսի պատուէր մը, որ նախապատճէնը մարդու ցոյց չը տուած, և ո՛չ իսկ Ս. Պատրիարքին, որ թէ՛ ընդհ. ժողովոյ և թէ՛ գործադիր վարչութեան նախագահն է միանգամայն, հաւանութիւնը չտուած յիշեալ պաշտօնական յայտարարութեանը իմրագրական ձեռքն վրայ, ուղղակի հրատարակութեան գրկուի:

—Ո՛չ երբէք:

Իւ կամ յիշեալ յայտարարութեան նախագիր օրինակը ընդհ. ժողովոյ դիւանը ի՞նքր արդեօք տուած էր դիւանատան:

—Ո՛չ երբէք:

Այս արեւմտեան դիւանատան պարտքն էր այդ յանձնարարեալ գրութիւնը գործադիր նախագահին ցոյց չտուած և հաւանութիւնը չտուած՝ դուրս չը հանել:

Ըրաւ զայս դիւանատանը:

—Ո՛չ երբէք:

Վստի գի իմէ բրած բլար՝ ո՛չ Ս. Պատրիարքը և ո՛չ Քաղ. ժողովն այս առթիւ զգիւնապետն կշտամբելու և յանդիմանելու պատճառ և իրաւունք մ'ունեցած չգիտի բլարին:

Հետեւաբար զեղծում մնէ գործածը, ուրկէ կուզէ թող յանձնարարուած բլար այդ գրութիւնը:

Գրութիւն մը յանձնարարելը՝ գործադիր նախագահին ցոյց չտուած՝ հրատարակութեան գրկել չնշանակեր:

Դիւանատանն այս կետը անգիտացողներէն չէ, իսկ երեսփոխանի մը գործած ճնշումը և գործել տուած զեղծումը արդարացիելու կամ ոքոյնու համար արգարե ասկէ զատ ուրիշ պատասխան մը չէր կրնար գտնել դիւանատանը:

Ուստի կոպտեմք տեսնել թէ Ս. Պատրիարքը թող պիտի տայ որ հրատարակութիւն պաշտօնական գրութիւն մ'առանց իրեն ցոյց տրուելու՝ դուրս հանելու զեղծումը չարունակէ ընդերկար, որոյ օրինակը տեղ մ'ալ չէ տեսնուած:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Լոնտոնայէն Քոնսթիթիւտիօնի թերթին հետեւեալը կ'ըրեն:

Ենթադրենք թէ՛ ինչպէս Պալատներուն ստորտը՝ նոյնպէս Պուլկարիոյ միւս տեղականքն ալ սոսկալի ձմեռ մ'ընէ: Արդ ո՛վ աւելի փնտս պիտի տեսնէ ձմեռէն, ջարդ կ'կործէ թէ իր զօրքերը օսմ. զօրքերէն աւելի ցրտի ու ձիւնի կրնան դիմանալ և այս տեսակետով

կ'յուսայ թէ անօթութիւնն ու հիւանդութիւնները պիտի ստիպեն զՕսման բաշան որ անձնատուր բլար:

Սուլթանն այ իր կողմէն այն կարծիքն ունի թէ ցրտէն աւելի անձրիւ մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ իրեն և ուսանելի Պուլկարիայէն հեռացնէ: Պէտք չէ մոռնալ թէ՛ նոյն ամիսը Պուլկարիոյ մէջ շարունակ ձիւն և հեղեղանման անձրիս կուգայ, որով ճանրոյնիք ճահիճներ կ'ձեռացնեն: Ուրեմն ուսք ինչպէ՞ս պիտի կրնան այս 3 սոք խորութիւն ունեցող ցեխին մէջ գործ տեսնել: Ահա արդէն կուրքօ զօրապետը, որ իր բունած ճանրայնէրէն դուրս ելնելու անկարող կը գտնուի:

Նոյնպէս է Շիրկայի մէջ ալ: Սակայն հոգ գտնէ սա տարբերութիւնը կայ որ ուսք իբրեւ ճիւղներ չկան եւ, որոց տակ կրնան պատուաբար իւր, բաց Բըլէլիոյ շուրջն ու վերին Լսմի երկանքը ստուէն հազար անգամ աւելի վտանգաւոր խոնաւութիւն մը կ'արբէ՛ մինչդեռ օսմանցիք իրենց շինած ապաստանարաններուն մէջ կրնան պատուաբար իւր:

Հոկտեմբերի տոյնի 15 օրուան մէջ Ենթաթերթ 2 մեծ և քանի մը փոքր կարաւաններ անցուց: Օսման բաշա իրօք պաշտօնաւոր է, բայց միւս կողմէն Մէհմետ Ալի բաշա ալ 30.000 հոգիի դուլին անցած՝ յառաջ կ'իսկողայ կողմէն կուրքօի վրայ յարձակելու համար, մինչդեռ Ենթաթերթ բաշա ալ Որխանիէյէն 3 միլիոն հեռու կ'ամրանայ:

Մէհմետ Ալի բաշայի հըրամանատարութեանը տակ գտնուող այս 30.000 հոգին հապճեպով ժողովուած զօրքեր չեն: Ու չիմ'նախագգացութեամբ մը, այս ընտիր գունդը կ. Պոլսոյ մէջ պահուած էր՝ Պուլկարիոյ մէջ կացութիւնը վտանգաւոր եղած ինչպէս զայն գործածելու համար:

—Գոնսթիթիւտիօնէլ թերթը կըսէ թէ, Պուրէշի նշանաւոր անձինքը իշխանուհոյն դիմելով, թախանձանօք խնդրեր են իրմէն՝ որ իր ամուսնոյն վրայ ազդեցութիւն բանեցնէ՝ որպէս զի ալ զօրք չըրկուի Բըլէլիա: Ռուսիոյ համար ճակատամարտի գաշտին վրայ մեռնող ռուսներ զօրաց թիւը 7-800 հոգիի կ'ընէ:

—Պուրէշ 2 նոյն Սիւլէյման բաշա իր զօրքերը Բաղլըրատի մէջ կ'համարմբէ, ընդամենը Ռուսնուդի մէջ 20.000 և Օսման Բաղլըրի մէջ 15.000 հոգի թողով: Բաղլըրատ ժողովուելիք զօրութիւնները 85000

կանոնաւոր և 10.000 անկանոն զօրք պիտի բաղկանան:

Սիւլթանի բերդապահ զօրքերը 15.000 հոգիի պիտի լրանան: Քաղաքի լազ Սիւլէյման բաշայի բանակակազմը պիտի բլար:

—Կ. Պոլսէն Բէրի պիւք Ֆրանսէզի հետեւեալը կ'հաւագրեն:

Հոս իհիստպի հրապարակին վրայ Տէլի կուվան անուամբ Պուլկար մը կ'ախտեցաւ, որն որ կատարեալ գաղտն մ'էր: Հինգ հոգիի պատու բանարար և 3 տղայ սպաններ է՝ առանց հաշուելու իր գործած խել մը ոճիւնները, Սուլթանը զայս անձամբ հարցաքննել ուղելով, հարցաքննել է թէ ինչ բան թեկադրիւ էր զինքը այդ ոճիւնները գործելու: Բիւ մեծերուս հրամանները, եթէ անոնց չհնազանդէի՝ չպիտի խնայէին զիս պատասխաններ է:

—Տէլի թէլէկրաֆ անգղ. թերթին թղթակիցը նոյն թերթէն անկանաւ Սոֆիայէն հետեւեալը կ'ըրէ:

Թիւրիսի պատերազմին անձամբ ներկայ եղող թղթակցի մը հետ խօսակցեցայ, որն որ օսմանցոյ անձնատուր բլարուն վրայ խօսելով զանոնք օհ է պարտաւանաց արժանի չգտնէր և կ'հաստատէ թէ ուսաց բրած տուրին յարձակում մը մեծ քաջութեամբ ետ մղեցին և թէ այս վերջինները ճակատամարտի դաշտին վրայ 600 մեռեալ թողլով ետ քաշու եցան Երկու ժամ վերջը, ուսք ստուար զօրքով ետ գարձան և սոսկալի յարձակում մ'ըրին: Գիւղին ուղղութեամբ 60 թնդանօթ զետեղեցին և սկսան օսմ. զօրաց վրայ կարկուտի նման խիտ առ խիտ ուսմբ արձակել: Թիւրի հրամանատարը՝ տեսնելով անանկով որ ալ ևս անկարելի է դիմանալ, պատգամաւոր մը զրկեց անձնատուր բլարու առաջարկութիւնն ընելու համար, զորս ուսք բնդունեցին: Օսմանցիք զէնքերնին վար դրին անձնատուութեան պայմաններուն համաձայն, բայց յանկարծ ուսք փոսերուն մէջ մեռնելով սկսան սուլնով օսմ. զօրքերը սպաննել:

—Պիէն Բիւ պիւք՝ գաղթ. թերթը կըսէ թէ Բիւլէլիայի մէջ պաշտրեալ Օսման բաշա նամակ մը գրելով դուրս հաներ է: Այս նամակը Սպարապետութեան ուղղեալ հեռագիր մնէ կղեր, ծանուցանելով որ եթէ Սպարապետութիւնը հարկ դատի, պատրաստ է ինքը պաշարման դիմը ճեղքելով դուրս ելնելու, և այս ընելիք շարժման ալ բլանը կ'ընցատի ե-

ղեր: Սպարապետութիւնը նըկատողութեան տանելով յիշեալ հեռագիրը, իմաց տուեր է Օսման բաշայի թէ՛ դուրս ելնելու հարկ չկայ, այլ ինչքան որ կրնայ՝ թող դիմանայ Բիւլէլիայի մէջ:

ՀԵՌԱՐԱՊԵՏՈՒԹ

Ռարիդ 21 նոյ.

Պ. Կոմպէլիթա աշուր էլ և մերից յանձնաժողովոյ նախագահ բնտրուելով բառ. «Մենք օրինաւորութիւնն անխախտ պիտի պահենք, և պիտի ջանանք որ անկէ խօստեղ ուղղութեան ալ անխախտ պահենք»:

Ս. Բէթերպուրկ 21 նոյ.

Կոյսերական հրամանադիր մը Սե ծովու և Ագախու ծովու նաւահանգիստներէն ամեն տեսակ նպար դուրս տանիլը կարգեալ:

Լոնտոն 21 նոյ.

Սթէնտըրա կ'հաւատէ թէ, ազդու միջոցներ ձեռք առնալ երկն Հայաստանի մէջ անգղիական շահերը պաշտպանելու համար:

Պահպանողական թերթերը ազդու բնթացք մը կ'պահանջեն:

Կ Ա Ր Ս

Ե Ի

ՕՍՄ. ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ատենէ մ'ի վեր մայրաքաղաքիս հատարակութեանը մէջ կարսի նկատմամբ տարածուած զրոյց մը՝ վե ջին օրերս աւելի ծաւալում գտնելով, այժմ սկսած է ամեն մարդ հարցնել իրարու թէ:

Կարո իրօք անձնատուր եղի՞ր է թէ ոչ:

Կարսի անկումը՝ կըսէ Լեւանթ երէկ՝ անկարելի բան մը չէ, իսկ տարածուած զրոյցները վաւերականութիւն մը չունին, մանաւանդ թէ իրարու ալ հակառակ են:

Ըստ ոմանց՝ մասնաւոր հեռագրի մը նայելով՝ Աթէնքի թերթերը կ'օրջաքօփ իշխանին քաշած մէկ հեռագիրը կ'հրատարակեն եղեր թէ կարող անձնատուր եղիւ է:

Ըստ այլոց՝ մայրաքաղաքիս Աւսար. դեսպանատունը հասեր է եղեր այդպիսի հեռագիր մը: Իսկ զատի երէկ անստոյգ կ'հանէր Պասիքէթ:

Երբորդ զրոյց մ'ալ սապէս կ'պատմէ: Ռուսք կարսի առաջը մեծ զօրութիւն ստանալով, բերդին դէմ սոսկալի ռմբակոծութիւն մը սկսեր, և երբ օր շարունակ սաստիկ յարձակումներ մղեր են բերդաքաղաքին դէմ: Առջի երկու օրեր

ընդ յարձակումներն զիւցողն ու
բարեւոր միտքն են բերող
պահ զօրք՝ ընդ իսկ երկրորդ օ-
րը քաղաքիս օսմանցիք յոգ-
նաւի են արդէն նուազեալ ու
տկարացած ըլլալով, իրենցմէ
բազմաթիւ զօրաց անձնատուր
եղեր են: Ռուսաց ձեռքն ին-
կող օսմ. գիւղիւնքուն թիւն է
եղեր 10-000 հոգի 130 թիւդա-
նօթով, իսկ բոտ ալլադ 6000
հոգի 200 թիւդանօթով:

Կորս ամսոյ 6ին կիր. օրն
առնուեր է 12 ժամ չարունակ
յարձակումէ մը վերջը, յորում
առաւ անհամար մարդիկ են
կորսնցուցեր:

Սոյն ալլադ զրոյցներն կը
յիշատակենք անոր համար որ
ներկայ պարագայներու մէջ ար-
դայաւարութիւն է զանանք գո-
ցէն անցնելը կամ չգիտնալ ձե-
ւացնելը, մանաւանդ թէ զա-
սոնք երեւան հանին սա ա-
գուտն ունի, որ այդ զրոյցնե-
րուն հակառակման թիւնը և
անվաւերակամութիւնը հրապա-
րաւ ցոյց տրուելով, հասարա-
կութիւնն ալ համոզմամբ կ'ըզ-
դուշանայ այսպիսի անստոյգ
և անվաւեր լուրերուն բոլորո-
վին հաւատք բնծայել է:

Մինչև որ Կարսի վրայօք
սպասուած ստոյգ յորերն հաս-
նին, այս առթիւ կարեւոր կ'հա-
մարիմք բուն Հայաստանի նը-
կատմամբ Ռուսոյ երկրակալու-
թեան դիտումներն ի վեր հա-
նել աստանօր, զոր կ'հրատա-
րակէ Ս. Բէթմիսպուրի կէս
պաշտօնական համարուած կօ-
լոս լրագիրը:

Վերոյիշեալ թերթը ապա-
գայ հաշտութեան մը պայման-
ները քննելուն առթիւ սա կեր-
պիւ կարծիք կ'յայտնէ:

Ասիոյ մէջ պատերազմէն
առջի վիճակին շարունակութիւ-
նը Ռուսոյ առաջադրած նպա-
տակին բոլորովին հակառակ է:
Օսմ. Հայաստանի բնակիչներուն
կէսը քրիստոնեայ են, որոնք
Պալքանիկոս քրիստոնեայնե-
րուն չափ վնաս կ'տեսնեն օսմ.
տիրապետութենէն, Ռուսական
զօրաց պահ մը գէպի սահմա-
նազուլս ետ քաջուած ատեն
այդ տեղունքի հալ ժողովրդ-
եան կրած չարիքը բաւական է
ապացուցանել թէ Օսմ. Հա-
յաստանի մէջ պատերազմէն
առջի վիճակին վերահաստա-
տութիւնը անկարելի է այնպիսի
կառավարութեան մը համար որ
ի պաշտպանութիւն քրիստոնե-
ից զէնք առած է:

Գալով պատերազմական
տուգանաց, պարզապէս ծաղու-
արժանի բան մ'է այդ Ո՞վ չգի-
տէր թէ Բ. Դուռը, որ 2 տարիէ

ի վեր անանկացած է արդէն,
իր յաղթական թշնամունքա-
մ'անդամ վճարելու անկարող
կ'գտնուի Յայտնի է թէ զրա-
մական տուգանքի մը խօսքն
անգամ ընել աւելորդ է, իայց
թուրքիոյ հետ մեր կնքել ու-
զած հաշտութիւնը այնպիսի
հիմնու վրայ հաստատուած
ըլլալու է, որ անխախտ կեր-
պիւ քրիստոնէից վիճակը ապա-
հովիէն զատ, կարող ընէ բզ-
Ռուսիա որ արեւելեան խնդրոյն
հողերէն սղտակելով ինքզինքը,
թուրքիոյ հետ վերջնական կեր-
պիւ իր դուրձը կարգադրէ: Այս
նպատակին համեմու համար
ալ, այնպիսի հաշտութիւն մը
կնքելու ենք որ Ասիայէն տեղ
առնելով մեր պատերազմի հա-
մար բրած ծախքերը գոցէ և
կարող ընէ զմեզ մեր թուրքիոյ
հետ սենցած հաշիւնիս մաք-
րելու:

Կօլոսի այս տոյգերէն յալա-
նի կ'տեսնուի, որ եթէ Ռուսք
այս անգամ ալ յաջողին Օսմ.
Հայաստանը առնելու, զայդ
պատերազմական տուգանքի
տեղ գրաւելով, հաստատ մըտ-
քերնին դրեր են այլնս ետ չը
դարձնել, ինչպէս բրած էին
1829ին:

Իսկ եթէ այժմ Ռուսիա այն-
քան յօժարամիտ չերի իր Օսմ.
Հայաստանը գրաւելէն յետոյ
զայն վերջէն դարձեալ թուր-
քիոյ թողելու, և եթէ այլևս
Մուխթար բաշա մը չկարծեր
զանել իր դէմը որ Էղբուրմի
առջեւէն մինչև առաջական սահ-
մանները նորէն ետ մղէ զինքը,
գոնէ հիմայ ալ ահարկու Արգ-
ղիա մ'ունինք առջևնիս, որ
դեռ նոր երևան կենէ, և ինչ-
պէս կ'հաւաստէր Լոնտրայէն ե-
րէկ հասնող վերջին մէկ հեռա-
գիրը, զոր վերը տուած եմք-
սովորականէն տարբեր և ազ-
գու միջոցներ ձեռք առնուլ
սկսած է, թոյլ չտալու համար
որ Ռուսիա Օսմ. Հայաստանը
վերջնապէս գրաւէ:

Երբ Անգլիա այս առթիւ
յառպարէզ իջնէ, որ շատ հե-
ռի չ'թուիր, այն ատեն ներկայ
պատերազմին երկրորդ վարա-
գիւրը բացուած պիտի ըլլայ,
առանց այժմէն կարենալ գու-
շակելու թէ տակաւին քանի
արարուած է պիտի բաղկանայ
սոյն ամենայնամար պատերազմը:

Բուժէնաց Բլէվսայի դէմ
բրած վերջին յարձակմանը վը-
րայ Լիպէրթէ գաղղ. թերթը
հետեւեալ գիտողութիւնները
կընէ:

Ճշգրտանէ ինչ պատմու-
թեամբը, զոր Բուժէնք պահ մը

գրաւելին և որու ետեւ մեծ
չարմայմաք ուրիշ ցցապատ-
նէշ մ'ալ գտան, մարդ կրնայ
գիւրաւ հասկնալ թէ, եթէ
գերմանական ռազմագիտու-
թիւնը զաշտային երկիրներու
մէջ իր արժէքն ունի՝ Պուրկա-
րիոյ պէս լեւնաւ ու անհարթ
երկրի մը համար խիստ թերի
ու անբաւական է:

1870-1871ի Դաղդիոյ ձա-
խաղը պատերազմին առթիւ,
գերմանական ռազմագիտու-
թեան սենցած թերութիւննե-
րն ու առաւելութիւնները ե-
րեւան ելան: Գերմանական բա-
պայակոյտը բոլոր բարձր տեղ-
ուանքը բռնել տալով թիւդա-
նօթներ գեւեղիլ կուտար, և
այս կերպով գաղղիացիք շատ
գամ զօրք կեդրոնացնելու ան-
կարող կըլլային: Սակայն երբ
ցցապատնէշներու և հողաբուր-
ներու պաշտպանութեանը տակ
թշնամայն մօտեցան, այն ատե-
ր կարող եղան մեծ յաջողութիւն-
ներ ձեռք բերելու:

Նմանապէս Օսման բաշա ալ
ներկայ պատերազմին հանգա-
մանք շատ սղեկ հասկցած ըլ-
լալու է: Գիւրիոյն հասկցաւ թըն-
դանօթաց՝ մարտկոցներու և
նոյն իսկ սոսկ հողաբուրներու
դէմը գտնուած ատեն՝ բան մն-
ալ չ'արժելը: Այդ է ահա իր
զարմանալի զիմադրութեան
գաղափարը:

Եթէ իսկզբան պատերազ-
մին Ապուրէ Գէրմ բաշա Եան-
թրայի ընթացքը ամրացնէր
առաւ անյաղթելի խոչնդոտնե-
րաւ հանդիպելով չպիտի կրնա-
յին յառաջանալ և Շիրակայի
կիրճը օսմանցոց ձեռքը պիտի
գտնուէր այսօր:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒԻՆԵՐ

Սպարապետութեան գրնէն
այս գիշեր հրատարակուած ո
և է պաշտօնական յաւելուած
մը չկայ, սակայն Մուխթար
բաշայէն երէկ հասած հեռա-
գիր մը կայ, որ չէ հրատարա-
կուած, որով կարսի անձ-
նատուր ըլլալու հաւանակա-
նութիւնը երթալով ստուգու-
թեան կերպարանք կ'առնու:

Արդէն դէ. օր մայրաքաղա-
քիս դեսպաններն Բ. Դրան հա-
ղորդած էին Եւրոպայէն ստա-
ցած մէկ հեռագիրներն, ծա-
նուցանելով թէ Ռուսք յար-
ձակմամբ առեր են կարող:

Ասոր վրայ Դուռը տեղե-
կութիւն ուղղելով Մուխթար
բաշայէն, ու ևս նոյմ. 8 թիւ
հեռագրաւ կ'պատասխանէ թէ,
Եւրոսէն չարաթմ'առաջ ելնելով
ոլոր ճանքայններէ Էրզրում հաս-
նող քանի մը հոգի արգարե
պատմեր են իրեն թէ Ռուսք

այն աստիճան ստատկութեամբ
առմբ կ'աւերացնեն Էյեր քաղա-
քին մէջ, որ ընակիչը անա-
պատան փախչի: Դաննք գետ-
նին տակը փորուած պատուար-
ներու մէջ պատուարիկ հարկէ
կ'եր: Հեռագրաւ Ռուսաց
առմբերէն սպաննուողներն,
այդ թէ կին, կործանեալ տու-
ներուն փրտակալը տակ մը-
նացած ըլլալու էին, անկարելի
ըլլալով զաննք ուրիշ տեղ մը
տանիլ թաղելու:

Մուխթար բաշայի տոկէ
ետքը զրկած ուրիշ մէկ հեռա-
գիրն ալ կարսի վրայօք ուրիշ
տեղեկութիւն մը չկրնալով տալ,
կրնէ թէ Էրզրումէն այն կողմը
զրկուած յրաճանքը դեռ դար-
ձած չեն, երբոր գառնան՝ ին-
քն ալ անմիջապէս պիտի հե-
ռագրէ առած տեղեկութիւն-
ները:

Աւելի վերջին մէկ հեռա-
գիրն ալ, որ երէկ քաշեր է
Մուխթար բաշա, կրնէ թէ Տէ-
վէպոյնույի ռուսական բանա-
կին հրամանատար Տէր Ղուկա-
սօֆի թիկնապետը յատուկ գը-
րութեամբ մը ծանուցեր է ի-
րեն թէ Կարս ինկեր է, իսկ
ինքը չէ ուզեր հաւատ ընծա-
յել, ստուգութեան կարօտ նը-
կատելով:

Իսկ Պատրիք Սոյս առաւօտ
կրնէ թէ, երէկ գիշեր հասած
պաշտօնական հեռագիր մը՝ 3
օր 3 գիշեր ստակալի ռմբակու-
ծութենէ մը ետքը՝ Կարսի բեր-
դին ռուսաց ձեռքն իյնալը կը
ծանուցանէ, իսկ հրամանատա-
րը Հիւսէյին Համի բաշա՝ ճան-
բայ մը գտնելով փախեր է:

Վազըթ ալ կրնէ թէ Կարսի
բերդապահ զօրաց մէկ մասը
գերի իյնալով, մնացածը զէն-
քերովսին փախեր են:

Կարս ստուգիւ ձեռքէ գը-
նաց, բայց վհատելու չէ, աս-
դին Էրզրում մ'ալ ունիմք, զոր
Մուխթար բաշա կ'պաշտպանէ:

—Տէր Ղուկասօֆ զօրապետը
գիր մը զրկելով Մուխթար բա-
շայի Էրզրում: հրաւիրեր է զին-
քը անձնատուր ըլլալու, հե-
տեւեալ իմաստիւ. «Կարսն առ-
նուցաւ, հան տեղի բոլոր զօ-
րութիւննիս հոս պիտի գայ»:
Էրզրումի պէս քաղաք մը չկոր-
ծանելու և բնակիչներն ալ չըս-
պաննուելու համար, կազդա-
րարուի որ դուք ալ անձնա-
տուր ըլլաք:

Մուխթար բշ. չգիտցուի
թէ ի՞նչ պատասխան տուեր է,
բնդունելով զայդ Էրզրումի ալ
յանձներ է ռուսաց թէ մերժե-
լով ցոյստին շունջ պաշտպանել
սկսեր է:

—Էտրնէի մէջ անցեալ շաբ-
թու Եալքըզ-կէօզ անուն շա-
ղաքը գիպուածով բռնկելով,
մէջը գտնուած մեծ տքունակ
արքունի ցորենն ու սլիւն ալ
միատեղ այրեր սպառեր է:

ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ
ԴԱՂԺԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ
ԵՄԵՐՈՒՄԻՆ ԼՆԵՐԻՆ
Լ ԵՆԵՐԻՆ
Ուղղորդող թիւն յամին 1878
ԱՐԵՎԱԾԱՅ Մ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Ազգին ամենամեծը պիտոյք-
ներէն մին համարուած վիճակագ-
րութեան մէկ մասը կը լեցնէ սոյն
երկատիրութիւնը որ ազգասէր և
հայրենասէր արտի և զգացմանց մէկ
կենդանի պատկերն է :

Հեղինակը Մուսոն-Ալաբքիա ,
Հոնգարիա և Հիւստոնի պարտիզ
տեղւոյն հայ ժողովրդեան վարուց և
բարոյս , ազգային սովորութեանց
վրայ տեղեկութիւններ հաւաքելու և
զանոնք ի լոյս բերելու և ապագային
իրեն շահ մատակարարող փոքրիկ
դուռնուրը սոյն գործին տպագրու-
թեանը զոհուով :

Կ'փափաքեմք որ սոյն հեղի-
նակին անձնութիւնը օրինակ և
գրգռիչ ըլլայ շատերու , որով միայն
կարելի է Հայոց Ազգին ամբողջ վի-
ճակագրութիւնը պատարասել :

Կը հրաւիրեմք բոլոր հետաքր-
քէր ազգայինները որ սոյնէն օրինակ
մը առնելով օտար աշխարհաց մէջ
գտնուած մեր ազգակից և հայրե-
նակից եղբարց վրայ լիութիւն տեղի
կուծիւն ստանան :

Կը ծախուի ամէն գրաւորա-
նաց քով , Գին 5 ֆառնգ թղթա-
ղբում :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՏԱՍԱՆ ԿԵՍԱՐԱՅ

ԳՈՐԾ ՍՈՒԷՏՈՆԻՍԻ

ԹԻՖԼԻՍԻ Ե. Ս. Ս.

Հայ ժողովրդեան ընթերցասի-
րութիւնը գոհ ընելու մասը՝ Մատենադարան ընդ հանուր անուամբ հի-
տըզհետէ օգտակար և կրթական
գործեր պիտի հրատարակուի : Այս
անգամ սկիզբ կընենք այս ձեռնար-
կութեան՝ Երկոտասան Կեսարաց
Պատմութիւնն ի լոյս բնծայելով
Թարգմանութիւն , և աներկմիտ եմք
որ Հայ հասարակութիւնը քաջ ըն-
դալով այս Մատենադարանին օգ-
տակարութիւնը սխալ փութոյն արդ-
եամբ քաջալիրի զմեզ որպէս զի
սոյն ձեռնարկութեան մէջ յարա-
տեմք :

ՀԻՄՆԻՆԻՆ

Կ'ծախուի Եփեսոս-ճամբի Զինի-
կիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Դ. եւ
Եպիփանիոսի գրաւորութիւնը և ուրիշ
գրաւորաւորաց քով գին 5 ֆր. 50 անթ.

ԹԱՏՐՈՆ

ԱՐԱՆԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ

ԲԱԶՄԱՊԱՏԱՆԻՐ

Տղայոց ընթերցանութեան յատ-
կացեալ այս հանդէսը՝ որ ազնիւ
թղթոյ վրայ բազմաթիւ պատկերնե-
րով գեղեցիկ և վայելուչ տպագրու-
թեամբ ի լոյս ընծայուած է , կը
պարտենակէ բարոյականի հրահանգիչ
և զուարճալի նիւթեր :

Այն դարձողն ստորեկան 24 թեր-
թերը ամբողջապէս կազմուած , Կա-
ղանդի նուէրի համար ամենէն յար-
մար և պատուական առարկայ մ'ը-
լալով , սոյն նպատակին ծառայեցը-
նելու համար ալ գործոյն ստեղծ-
ութեանը նայելով գինը ամենաշին-
ջին գումարի մը՝ սոյն է 1 ֆրանք 50
անգլիմի կամ որ նոյն է 6 րը՝ մէ-
նիմի գումար իջած է , և կը ծախ-
ուի փարիզու գրատունը և ամեն
ախճաւորաց քով :

ԴՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՏԵԿԱՆ

ԴՅՈՒՆ ՏԵ ՄՈՐԿՈՐ

ՄԱՐԻՕՆ ՏԸ ԼՕՐՄԻ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ

ԹԻՖԼԻՍԻ Գ. Ս. Ս.

Սոյն նշանաւոր վէպին հա-
յերէն թարգմանութեան հր-
րուի հասարակ Պոլիս հասած
ըլլալով , կ'ծախուի Ս. Դ. եւ
Եպիփանիոսի գրաւորութեան
ճամբի Զինիկիրէր ճատտէսի
թիւ 2 , և ուրիշ գրաւորա-
նաց քով :

Գին 2 ֆր.

Ամբողջ գործը և հատորէ
պիտի բաղկանայ :

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱԶԱՆ

ԳՏՆՈՒԱՄ

ՈՒ

ՓԱՆԱՍԷ

Կոչուած ցաւի դեղը բո-
լորովին բուժեցնելու է բազմա-
բուսած ըլլալով թէ՛ ներսէն և
թէ՛ դուրսէն կ'գործածուի ու
բազմաթիւ ցաւեր ու հիւան-
դութիւններ շուտով կը բժը-
կէ , ինչպէս որ վարը յիշուած է :

Ամեն տեսակ Բուքի , Ըս-
տամբքի , մէջքի կամ Աղիք-
ներու ցաւեր . ու նաեւ Թանջի-
Քոլէրա և այլ ամառուան հի-
ւանդութիւններ ունեցողները
այս դեղէն խմելու են հետեւ-
եալ կերպով : Կէս դաւաթ ջու-
րի մէջ , դիր ապուրի դրդա-
լէն աւելի չաքար , վրան լե-
ցուր անուշի դրդալ մը Փա-
նասէ՝ աղէկ մը լսանէ ու
խմէ :

Կոկորդի հիւանդու-
թեանց , և Ուռեցքի համար
դեղը վերոյիշեալ կերպով
պատրաստէ ու ժամը կամ եր-
կու ժամը հեղ մը մէկ կամ
երկու անուշի դրդալ այն
բազմաթիւ բնէն խմէ : Յօգա-
ցաւի ըրեմաթիզմ , Ոտքի ցա-
ւի , Ստամբքի ու տեսակ
տեսակ կուրակի ցաւերու հա-
մար դուրսէն Փանասէ քսելով
աղէկ մը չիւրու է : Ահաւայի
ցաւի համար քիչ մը բամպակ
Փանասէի մէջ թաթ խմելով ցա-

ւած ախուային վրայ դնելու է :
Ամեն ատեն երբոր ցաւի
մը համար դուրսէն Փանասէ
քսել հարկ ըլլայ , և թէ քիչ
մ'ալ խմուի աւելի շուտ բը-
ժըլուլութիւն կը ըլլայ :

Մարմնոյն այրուած կամ
ճմուռած տեղերը բժշկելու
համար վտանգը պատահածին
պէս Փանասէէն վրան աղէկ մը
լեցնելու է : Դանակով և լին-
կարուած վերքերը բժշկելու

համար արիւնը չի սրբած շու-
տով մը վէրքը կապելու և կա-
պին վրայէն Փանասէ լեցնելու
է մինչեւ որ լաւ մը թրջի :
Փանասէ նաեւ արեան շրջանը
կարագացնէ ու բոլոր բնու-
թիւնը կը զօրացնէ :

Սյա դեղին օգտակարու-
թեանը վրայ երկարօրէն զրեւ-
աւելորդ կը համարուի . գոր-
ծածաղները զայն միշտ կը գո-
վեն , ուղղը կընայ անձամբ
փորձել . զինն աժան է : Կը
ծախուի Մինասեան և Ընկե-
րաց Ամիրկեան վաճառատու-
ները ի Ղալաթիա Կ. Պոլսոյ :

ՆԱԽՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՈՒՑ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ԿՐԹԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԸՍՏ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅ

Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՈՒՑ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

Յօդուած

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԲԵՊՈՒԿՈՐՈՍ ՆԱՐ ԳԵՅ

Առաջադրութեամբ եւ Վառեցմամբ

ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՐՈՅ

Տպագրեալ Հրատմամբ

Տ. ՆԵՐՍԻՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԿԻ Կ. ՊՈԼՍՈՅ

Մեր վարժարանաց թէ՛ նախ-
կըրթարանի եւ թէ՛ զարգացեալ
դասուց աշակերտք մինչեւ հիմա
չունին այնպիսի Քրիստոնէական մը
որ կարող ըլլար նոցա մտքերը գո-
հացեցիչ կերպիւ բուսաւորել Նրոնի
վարժարանութեամբքն ու սրտերնին
կրթել Բարոյականի վեհ սկզբուն-
քովը :

Այս պակասը լեցնելու համար
Ազգային Կեդ. Վարչութեան Կրթ-
նական ժողովը խնդրած է Կեդ. Տ.
Խորէն Ս. Արքեպիսկոպոսէ Նար Պէյ
յարմարագոյն դասագրքեր յօրինել,
որ բոլոր դպրոցաց մէջ և ամէն դա-
սասունաց ձեռքը կրնան և Բարոյա-
կանի առաջնորդող գործիներ լինի ,
աշակերտաց համար ալ հրահանգիչ
լինելու ամեն հանգամանքներն ու-
նենան :

Կրօնական ժողովոյն փափաքը
լիովին կատարուեցաւ . եւ ինչպէս
որ այս գործոց սկիզբը կը տեսնուի,
Ամենապատիւ Սրբազան Պատրիարք
Հայրն ու Կրօնական ժողովոյ Բնիշ
Յանձնախումբն իրենց գահաւորու-
թիւնն յայտնելով կը վկայեն միան-
գամայն թէ քաջաւորեալ Հեղինակի
գործերն ամենախմբ համաձայն են
վարժարանութեան և աւանդից Հա-
յաստանեայց Ս. Եկեղեցւոյ . նոյն-
պէս և տպագրութիւն նոցա օգտու-
կար յոյժ ի փառս Հայաստան Եկե-
ղեցեաց և յուսումն ու խաղ ժանկանց
վարժարանաց Ազգիս :

Այս գովեստները բաւական ե-
րաշխաւորութիւն են թէ՛ Սրբազան

Հեղինակին իրական արժանեաց և
թէ՛ սոյն Կատարաց խնամօք և ընտ-
րեալագոյն ոճով յօրինուած ըլլալուն
որոց համար իր տէր-հրատարակիչ
չնայեցիք ոչ ծախք և ոչ աշխա-
տութիւն , որպէս զի այս գրքերը
յարմարուոր պատկերօք և վայել-
լով տպագրութեամբ ի լոյս ընծայ-
ուին :

Քաջայայտ եմք որ այս Քրիստո-
նէական երկը Ազգին ընդունելու-
թեամբ պիտի արժանանան , մանա-
ւանդ կրթարանը , որ ոչ միայն
Դպրոցաց , այլ ընդհանրութեան և
կարի օգտակար պիտի լինի . քանզի
Ընտանեկան ընտիր հրահանգներ կը
պարունակէ . որոց միջոցաւ միայն
կրնամք յուսալ թէ օր մը մեր տու-
ները Նախնական դպրոցաց նմանե-
լով պիտի կարենան զուգընդաց
քոյրը վարժարանաց հետ և անոց
ընթացիկը նպաստել ըստ կարի :
Լուստարեալ Ազգերն այս միջոցով
գործացան , որ ցարդ անոր օգուտ-
ներն ալ կը վայելեն :

Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Կը ծախուի գրաւորաւոր խա-
նութիւնը ,

Ի Գ. Ի. Ն.

տանգ.

Նախնական Քրիստոնէական 50

Կրթական Քրիստոնէական 80

Կրթական Քրիստոնէական գր-
քատունը 2 ֆառնգ թղթ . — Յակոբ

Կառ խան թիւ 15 :

Դպրոցաց համար մեծ քանա-
կութեամբ գ' ողնիւրուն հարիւրին 10

գեղջ պիտի ըլլայ :

Ղալաթիա եճ. 10. Նոյմ.
ԸՆԴՀ. ՊԱՏՐ. ՍՐԺ.

Բաց	11.07
Գոց	11.07
Բարձր գին	11.08
Ցած գին	11.07

Փոխ. 63ի	Ֆր. 54.—
» 65ի	» 55.—
» 69ի	» 51.—
» 73ի	» 49.50

Գանձատուն	18.—
Սօսիթէ Ժէնէրալ	3.28
Սօսիթէ Ժ Օթման	2.27
Պանք տը Բօնաթ.	3.30
Բրէտի Ժէնէրալ	3.17
Թրամիլէյ	1.10
Բուս. Երկաթուղի	31.75

ԸՆԹԱՅԻՆ ԴՐԱՄՈՑ

Պրինձ	166.20
Թղթադրամ գոցուած	200.10
(Օ.Տ. Ե.Ի. 100 Կ.Ե.Ե.Ե.)	
Սնդու. ոսկի	108.38
Գաղղ.	86.26
Բօլ	88.30
Քարպօն արծաթ	16.20
» թղթադրամ	10.25
Քրքմից	50.35
Հինգնոց	19.—
Մէթալիք	19.—
Ճերմակ մէճիտ	6.05

ՍԱՀԻՊԸ ԻՄԹԻԱԶ

ՊՈՂՈՍ ՔՐԻՐԾՃԵԱՆ

Բէրշէմպէ բազարընտա իր-
սի խանըն գարչուսընտա Պա-
քըր սօքաղը Ն. 12 :